

## Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

### ԾԱՂԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 23.01.2012Թ. ԿԱՅԱՑԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԻՑ

23.01.2012թ.

Գ.

Ծաղկաշեն

Ծաղկաշեն համայնքի ընդհանուր ժողովը նախագահուն էր ՀՀ Գեղարքունիքի մազպետարանի

ՀԳՀՄ հարցերի վարչության ՀԳՄՏՍ բաժնի վարիչ Հ. Օհանյանը

Օրակարգում

Ծաղկաշեն համայնքի ղեկավարի 2011թ. հաշվետվությունը:

Ջեկ. համայնքի ղեկավար Ս. Սարգսյան:

Ս. Սարգսյանը ներկայացրեց 2011թ հաշվետու ժամանակաշրջանում առանձին բնագավառներում կատարված աշխատանքների մասին:

Նշեց, որ համայնքի բյուջեն կազմելիս լուրջ ուշադրություն են դարձրել եկամտային մուտքերի

/ գույքահարկի, հողի հարկի, հողի վարձավճարի, տեղական տուրքերի և վճարների / հավաքագրման խնդիրների կատարման վրա:

2011թ-ի տարեկան վարչական բյուջեով հաստատված պլանով եկամուտները կազմել է- 13250.0 հազ. դրամ , փաստացի կատարվել է- 13120.7 հազար դրամ 99 % -ով, որից սեփական եկամուտները պլանով 5834.0 հազ դրամ , փաստացի կատարվել է 5704.7 հազ. դրամ 98 %-ով 1. գույքահարկ շենքերի և շինությունների համար` պլանով – 302.0 հազ. դրամ, փաստացի կատարվել է 117.4 հազ. դրամ 39 %-ով 2. հողի հարկ պլանով` - 3250.0 հազ. դրամ , փաստացի կատարվել է 3083.0 հազ. դրամ 95 % -ով 3. գույքահարկ փոխադրամիջոցների համար պլանով` - 352.0 հազ. դրամ , փաստացի կատարվել է - 301.7 հազ. դրամ 86 % - ով 4. տեղական տուրքեր պլանով` -30.0 հազ. դրամ , փաստացի կատարվել է 44.0 հազ. դրամ 147% - ով 4. հողի վարձավճար պլանով 1900.0 հազ. դրամ , փաստացի կատարվել է - 2157.1 հազ. դրամ 113 %-ով:

Համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր` պլանով – 300.0 հազ. դրամ , փաստացի կատարվել է 45.0 հազ. դրամ

Վարչական բյուջեի տարեսկզբի մնացորդը կազմել է 2621.4 հազ. դրամ , ֆոնդային բյուջեի տարեսկզբի մնացորդը 0.1 հազ. դրամ :

Հաշվետու ժամանակաշրջանում վարչական բյուջեի տարեկան հաստատված պլանով ծախսային մասը կազմել է 13250.0 հազ.դրամ փաստացի ծախսային մասը կազմել է ` 11660.5 հազ. դրամ , 88 % -ով, որից աշխատավարձ` պլանով – 7480.0 հազ. դրամ, փաստացի – 7125.6 հազ. դրամ

95.3 % -ով ; պարգևատրում պլանով – 700.0 հազ. դրամ , փաստացի – 693.0 հազ.

դրամ 99% -ով; սոց. ապահովության վճարներ պլանով – 1610.0 հազ. դրամ,

փաստացի 1371.1 հազ. դրամ 85%-ով ; ծառայությունների և ապրանքների ձեռ

բերում պլանով – 2146.0 հազ. դրամ, փաստացի 1608.8 հազ. դրամ 75 % -ով ;

սոցիալական նպաստներ պլանով -- 500.0 հազ. դրամ , փաստացի 500.0 հազ. դրամ

100 % - ով այլ ծախսեր պլանով – 814.0 հազ. դրամ, փաստացի 362.0 --հազ.դրամ  
45 %-ով:

Լուրջ ուշադրություն են դարձրել համայքի սոցիալ – տնտեսական խնդիրներին՝  
բյուջեի միջոցների հաշվին կատարվել 500.0 հազ. դրամի գետի հունի մաքրում շուրջ  
500 մետր, գյուղամիջյան ճանապարհների ընթացիկ նորոգում 300.0 հազ. դրամ,  
խմելու ջրի ներքին ցանցի կապիտալ վերանորոգում 921.5 հազ. դրամի , փողոցների  
լուսավորության ցանցի կառուցման և ընթացիկ պահպանման համար 1893.5 հազ.  
դրամ:

Համաշխարհային բանկի կողմից կառուցվել է Գավառ -Ծաղկաշեն ճանապարհը,  
կառավարության կողմից գյուղացիներին տրամադրվել գարնանացան գարու  
սերմացու 10 տոնա:

2011 թվականի կատարված աշխատանքները գնահատվեց բավարար: